# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 20/07/2020

## N 113303392 գնման պայմանագրի 23 հուլիսի 2013թ-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի

ք.Երևան «30» հուլիսի 2020թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության կորպորատիվ վաճառքների ծառայության ղեկավար Ռ. Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից (այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով N 113303392 գնման պայմանագրի 2013 թվականի հուլիսի 23-ին կնքված լրաչուցիչ համաձայնագրի 12-րդ կետը և ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 56-րդ կետի 2-րդ ենթակետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

### *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը լրացնել՝ համաձայն սույն Համաձայնագրի N 1 հավելվածի:

1.2 Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:

### *2. Այլ պայմաններ*

2.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների կատարման ավարտը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է համաձայնագրի մեկ օրինակ:

### *3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ | «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ |
| ք. Երևան, Հանրապետության հրապարակ | ք. Երևան, Ազատության պ. 24/1 |
| Կառավարական տուն 1 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Հ/Հ 163004038861 |
| Հ/Հ 900011022085 | ՀՎՀՀ 02500052 |
| ՀՎՀՀ 02505554 | |
| _____ | _____ |
| / ստորագրություն / | / ստորագրություն / |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*« 23 » հուլիսի 2013թ. կնքված*
*113303392 ծածկագրով պայմանագրի*
*« 30 » հուլիսի 2020թ. կնքված N 20/07/2 Համաձայնագրի*

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

## *Բջջային հեռախոսների ծառայություններ*

Drive Maxi+ (200 ԳԲ) (Հետվճարային)- 2 քարտ

Գերարագ Ինտերնետ նոութբուքերի, WiFi/USB մոդեմների համար

Ինտերնետի ծավալ-200 ԳԲ

Արժեք-10 000 դրամ/ամիս

Սակագներ

| | |
|---|---|
| Անցում այլ հետվճարային ՍՓ-ից Drive Maxi+-ին | 0 դրամ |
| SMS փոխանցում դեպի ՀՀ և ԼՂՀ բջջային ցանցեր | 20 դրամ |
| SMS փոխանցում դեպի միջազգային բջջային ցանցեր | 30 դրամ |

Եթե ինտերնետ փաթեթը սպառվել է

Կարող եք միացնել՝ «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը

| | | |
|---|---|---|
| Ակտիվացման վարձ | | 300 դրամ |
| Գործողության ժամկետը | | մինչև հաջորդ օրվա 23:55* |
| Տրամադրված Ինտերնետի արագություն | | մինչև 1024 Կբիթ/վրկ |
| Տրամադրված Ինտերնետի ծավալ | | առանց սահմանափակման |
| | USSD | *7007# |
| Ակտիվացում | SMS | 7007 տեքստ 0674 համարին |

Հետվճարային սակագնային փաթեթներին հասանելի է «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը, որը կարող է ակտիվանալ սակագնային փաթեթի շրջանակներում տրամադրված գերարագ Ինտերնետի ծավալը սպառելուց հետո:

Drive Maxi+ հետվճարային սակագնային փաթեթին բաժանորդագրվելու դեպքում կարող է ձեռք բերվել Beeline SM25 4G WiFi երթուղիչ հետևյալ հատուկ պայմաններով՝

Սակագնային փաթեթին 18 ամսով բաժանորդագրվելու դեպքում Beeline SM25 4G WiFi երթուղիչը կարող է ձեռք բերվել ընդամենը 100 դրամով՝ ներառյալ ԱԱՀ:
Սակագնային փաթեթին 12 ամսով բաժանորդագրվելու դեպքում Beeline SM25 4G WiFi երթուղիչը կարող է ձեռք բեվրել 5000 դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

Բաժանորդագրության դեպքում և շարժական ինտերնետի ծառայությունների պայմանագիրը բաժանորդագրության ժամկետից շուտ խզելու դեպքում Բաժանորդը վճարում է պայմանագրի ստորագրման օրվա դրությամբ WiFi

երթուղիչի առուվաճառքի հայտարարված գնի և վճարված՝ 100 կամ 5000 դրամ գնի տարբերությունը:
Բաժանորդագրության դեպքում անցումը Drive Maxi+ սակագնային փաթեթից այլ սակագնային փաթեթների հնարավոր չէ:

Պայմաններ

Մինչ օրացույցային ամսվա ավարտը կարող է ակտիվանալ «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը անսահմանափակ անգամ, յուրաքանչյուր միցման համար վճարելով ծառայության ակտիվացման վարձը:
Drive Maxi ՍՓ-ով նախատեսված 200 ԳԲ ծավալով Ինտերնետը տրամադրվում է յուրաքանչյուր ամիս՝ ամսվա առաջին օրը:
ՍՓ-ով նախատեսված 200 ԳԲ գերարագ Ինտերնետի ծավալը ամբողջությամբ տրամադրվում է ամսվա առաջին օրը փաթեթին միանալու պարագայում: Այլ օր միանալու դեպքում սակագնային փաթեթի ամսական վարձը և նրանով տրամադրվող գերարագ Ինտերնետի ծավալը հաշվարկվում են սակագնային փաթեթի ձեռք բերման օրվանից մինչև տվյալ ամսվա վերջ մնացած օրերին համապատասխան:
Հետվճարային Drive Maxi ՍՓ-ի շրջանակներում օրացույցային ամսվա ընթացքում տրամադրված 200 ԳԲ գերարագ ինտերնետի մնացորդը՝ չօգտագործված ծավալը, հաջորդ ամիս չի փոխանցվում՝ զրոյացվում է:
Drive Maxi հետվճարային սակագնային փաթեթի բաժանորդներին ձայնային ծառայությունները՝ մուտքային և ելքային զանգեր կատարելու հնարավորությունը հասանելի չեն:
Ամսավճարը հաշվարկվում է օրական:
Եթե «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը ակտիվացվել է ամսվա վերջին օրը, ապա այն կգործի մինչ այդ օրվա ավարտը:
«Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը հասանելի է միայն Drive Mini, Drive Midi, Drive Maxi և Drive Maxi+ հետվճարային սակագնային փաթեթների բաժանորդներին:

Եթե «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը ակտիվացնեք 200 ԳԲ գերարագ ծավալը սպառելուց առաջ ապա ինտերնետը կգործի առանց արագության սահմանափակման, իսկ օգտագործած Ինտերնետի ծավալը զուգահեռ կսպառվի նաև սակագնային փաթեթով տրամադրված 200 ԳԲ ծավալից: Հետևաբար խորհուրդ է տրվում չակտիվացնել «Հավելյալ Ինտերնետ» ծառայությունը քանի դեռ սակագնային փաթեթով տրամադրված 200 ԳԲ արագ ինտերնետի ծավալը չի սպառվել:
Բոլոր գները ներկայացված են ՀՀ դրամով՝ ներառյալ ԱԱՀ:

Սակագնային փաթեթի նշված պայմանները գործում են միայն ՀՀ տարածքում:

* *Վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց:*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011022085
ՀՎՀՀ 02505554

/ ստորագրություն /
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության պ. 24/1
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163004038861
ՀՎՀՀ 02500052

/ ստորագրություն /
Կ.Տ